

ԻՆԱԼՔՕ-ի վկայականի ծրագիր

«Արեւմտահայերէնի ուսուցում սփիւռքի մէջ» (ստուգում Նոյեմբեր 2017-ին)

Թիրախ.- Այս ծրագիրը նախատեսուած է Արեւմտահայերէնի ներկայ եւ ապագայ ուսուցիչներուն համար, որոնք կը դասաւանդեն սփիւռքի հայկական վարժարաններու մէջ (Եւրոպա, Միջին Արեւելք, Ամերիկայի Միացեալ Նահանգներ, Գանատա, Հարաւային Ամերիկա, եւ Աւստրալիա): Միակ պահանջուած վկայականը Ֆրանսական Պաքայօրան է, կամ իրեն համարժէք՝ այլ երկրի երկրորդական ուսումը աւարտած ըլլալու փաստարկ մը:

Նպատակակէտեր.- 2010-ին Իւնեսքօն արեւմտահայերէնը դասեց աշխարհի վտանգուած լեզուներու շարքին: Սփիւռքի հայկական դպրոցներու աշակերտութեան ընդհանուր քանակը կարելի է համարել աւելի քան 20000: Հայկական դպրոցը լեզուի փոխանցումի գլխաւոր լծակներէն մէկն է, առնուազն Միջին Արեւելքի մէջ, ուր արեւմտահայերէնի կենսունակութիւնը բարձր է: Համաշխարհային այլ միջավայրերու մէջ, գոյութիւն ունի արեւմտահայերէնի նշանակալից պահանջք, սակայն լեզուի դիրքը աւելի խոցելի է եւ լեզուի փոխանցումին վերաբերեալ մանկավարժական մեթոտներու վերատեսութեան կարօտը զգալի :

Սոյն նախագիծի մեկնակէտերէն մեկը եղած է 2014 թուականին Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան նախանձեռնութեամբ կատարուած սփիւռքի հայկական վարժարաններու ինքնագնահատման գործընթացը՝ ղեկավարութեամբ եւ հսկողութեամբ Անի Կարմիրեանի (նաեւ վաղեմի Ինալքօ-ի դասատու) եւ մասնակցութեամբ (իբրեւ խորհրդատու) ԻՆԱԼՔՕ-ի դասախօս՝ Անահիտ Տօնապետեանի: Նախագիծը միաժամանակ մաս կը կազմէ ԻՆԱԼՔՕ-ի հայագիտական ծրագրին, ինչպէս նաեւ Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան Հայկական Համայնքներու նախաձեռնած Արեւմտահայերէնի զարգացման ծրագիրներուն:

Նախագիծի հիմնական նպատակն է բարելաւել սփիւռքի հայոց լեզուի ներկայ եւ ապագայ ուսուցիչներուն մասնագիտական կրթութիւնը, զանոնք իրագել դարձնելով կրթութեան ժամանակակից մեթոտներուն եւ նրբութիւններուն եւ մղելով մանկավարժական փորձատիպերու քննական վերատեսութեան: Հայոց լեզուի մասնագէտ ուսուցիչն դիրքը բարելաւելու նպատակով՝ այս ծրագիրը կը շնորհէ եւրոպական վարկային միաւորներ (ECTS), որոնք փոխանցելի են լեզուի ուսուցման եւ հայագիտութեան բարձրագոյն ծրագիրներու:

Ուսման առարկան տարբեր ձեւաչափեր.

- Ծրագիրը կը սկսի չորս շաբաթեայ խտացուած դասընթացքով մը, որ տեղի կ'ունենայ Կիւլպէնկեան հիմնարկութեան եւ *Հագար ու Մէկ Աշխարհ* կազմակերպութեան համատեղ կազմակերպած ստեղծագործական արեւմտահայախօս ամառնային ճամբարի ծիրէն ներս, Յուլիս 15-էն մինչեւ Օգոստոս 9, 2018: Ծրագիրը կը յենուի ճամբարին վրայ, որպէս լեզուի ուսուցման նորարական մեթոտներու դաշտ: Ծրագրի երկրորդ մասը տեղի կ'ունենայ հեռակայ կարգով, յաջորդ ուսումնական տարուայ ընթացքին:
- Ամառնային դասընթացքը կը նախատեսէ 103 ժամ դաս, տարբեր ձեւաչափերով (դասեր, սեմինարներ, աշխատանոցներ եւ օտար լեզուի դասընթացք, տե՛ս ներքեւ ծրագրի մանսամասն նկարագրութիւնը): Ասոնց զուգահեռ, մասնակցողները պիտի դիտարկեն ամառնային ճամբարէն ներս լեզուի իւրացման ընթացքը եւ յաջորդող տարուան մէջ, իրենց դասարաններէն ներս նախաձեռնեն նոր մեթոտներու կիրարկման: Մինչեւ տարեվերջը մասնակցողները պիտի ներկայացնեն բանաւոր հաշուետուութիւն մը կամ ալ դասարանէն ներս այս աշխատանքներու գործադրութիւնը ցուցադրող տեսաերիզներ, որոնք պիտի կազմեն աշխատանքի գնահատումին հիմքը: Կրնան նաեւ առաջարկուիլ լրացուցիչ մասնագիտական դասախօսութիւններ՝ ըստ համապատասխան դասախօսներու մատչելիութեան:

- Մասնակիցները պետք է պատրաստ ըլլան ամբողջ տարեշրջան մը ներգրավուելու այս ծրագիրին մէջ: Ամառնային խտացուած ուսումնական ժամանակահատուածը նախատեսուած է ոչ միայն, ժամանակից մէջոտներու իւրացման, այլ նաեւ ուսումնական կիրառութիւններու վերաբերեալ քննական մտասելերման համար: Հետեւաբար, կարելոք է, որ մասնակիցները պատրաստ ըլլան կատարելու անձնական փորձառական ներդրումներ, որոնց յաջողութեան պարագային կը ստեղծուի նոր մէջոտներու կիրառութեան մշակոյթ: Արդիւնաւէտ աշխատանքի համար անհրաժեշտ է, որ ամէն մէկ մասնակից իր հետ ունենայ անհատական համակարգիչ մը:
- Ուսուցման լեզուն արեւմտահայերէնն է, սակայն որոշ դասախօսներ իրենց ներկայացումները պիտի կատարեն անգլերէնով (կը տրամադրուի թարգմանութիւն):
- Ծրագիրը կ'ընդունի 15 մասնակից:

Ժամանակացոյց.-

- Դեկտեմբեր 2017- Յունուար 2018: Դիմումներու ընդունում եւ մասնակիցներու ընտրութիւն
- Փետրուար 2018: ԻՆԱԼՔՕ-ի արձանագրութիւն եւ ամառնային դասընթացքի տեղերու ապահովում:
- Մարտ 2018: Դասախօսներու հետ հեռակայ ժողով եւ ամառնային ճամբարի խտացուած դասերու նախապատրաստական աշխատանքներ (ընթերցանութիւններ եւ խոհական վարժութիւններ):
- Յուլիս 15- Օգոստոս 9, 2018: Ամառնային խտացուած դասընթացք (103 ժամ դաս, դիտարկումներ եւ պարտականութիւններ): Մասնակիցները պետք է պատրաստ ըլլան ծանրաբեռնուած աշխատանքի:
- Սեպտեմբեր 15, 2018: Ամառնային դասընթացքի պարտականութիւնները յանձնելու վերջնաժամկէտ (օտար լեզուի իւրացման օրատեսք, դիտարկումներու հաշուետոյութիւն, դասարանէն ներս իրագործելի ծրագիրներու հաստատում). Յունուար 2019-ին, այս աշխատանքի վարկային միաւորները պիտի տրուին առաջին կիսամեակի նիշերուն հետ:
- Հոկտեմբեր 1, 2018: Անհատական ծրագիրներու մշակում, անհատական առաջնորդութեան սկիզբ եւ ծրագիրներու իրականացման առաջին քայլեր դասարաններէն ներս: Իւրաքանչիւր մասնակից նուազագոյնը երկու անգամ հեռակայ հանդիպում պիտի ունենայ զինք առաջնորդող դասախօսին հետ եւ մէկ անգամ մասնակիցներու եւ դասախօսներու ընդհանուր խումբին հետ:
- Յունիս 15, 2019: Գործնական աշխատանքի հաշուետոյութեան վերջնաժամկէտ:
- Յուլիս 1, 2019: Աւարտական արժեւորում եւ վկայականներու բաշխում: Աշակերտները իրենց արժեւորումները եւ վերջնական արդիւնքը կը ստանան Յուլիս ամսուան ընթացքին: Պաշտօնական վկայականներու պատրաստութիւնը կրնայ աւելորդ ժամանակ պահանջել:

Ուսման վարձք.-

- ԻՆԱԼՔՕ-ի կրթաթոշակը, որ կը ներառէ դասաւանդում եւ հետետղական աշխատանքներ՝ կը կազմէ 265€ եւ պետք է վճարուի մինչեւ Յունիս 15, որ ուսանողական քարտը ճամբարի սկզբին պատրաստ ըլլայ:
- Ամառնային ճամբարի կեցութեան եւ վերաորակաւորման ծրագրի ծախսերուն մէկ մասը պիտի հոգայ Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութիւնը: Ըստ մասնակցի երկրին՝ ծախսերուն մնացած գումարը պիտի կազմէ շուրջ 1200 Եւրո: Ցանկալի է որ այս գումարը վճառուի մասնակից ուսուցչի դպրոցի վարչութեան կամ մասնագիտական վերապատրաստման տեղական ծրագրի մը կողմէ:

Վարկային միաւորներ եւ վկայական.-

Մասնակիցներուն շնորհուած վկայականը բաղկացած պիտի ըլլայ ECTS- ի (հիմնականով մագիստրոսի աստիճանի) 32 վարկային միաւորներէ: Այն շրջանաւարտները, որոնք ունին անհրաժեշտ նախադրեալներ (առնուած 3 տարուայ բարձրագոյն ուսումի աստիճան), կրնան այս վարկերը ներդնել INALCO-ի մէջ հայագիտութեան մագիստրոսի ուսման նպատակով: Այս մէկը հնարաւորութիւն կու տայ երկու տարուայ ընթացքին, Ֆրանսական/Եւրոպական համակարգէն ներս ձեռք ձգել Մագիստրոսի կոչում:

Ծրագրի բաղադրիչներ

Ձեռագրի	Բովանդակություն	Դասա- ժամ	Գործնա- կան աշխա- տանքի ժամեր	ECTS Վարկ- ային միավոր- ներ
Հայերենի ուսուցման մանկավարժություն 1	<p>Երկրորդ լեզուի իւրացում: Լեզուաբանություն եւ ընկերալեզուաբանություն (Հայերեն)</p> <ul style="list-style-type: none"> Կիռարական ընկերալեզուաբանություն հայերենի ուսուցման համար Արեւմտահայերեն: Լեզուի տիպագրություն եւ լեզուներու շփում: Հետեւանքներ լեզուի իւրացումին եւ գրագիտութեան զարգացումին համար: Մանկավարժական կիրարկություն: «սխալ» հասկացողութեան քննադատական մօտեցում: <p>Դասախօս` Անահիտ Տոնայետեան-Տէմովուոս (Դասախօս, ԻՆԱԼՔՕ)</p> <p>Ընթացիկ արժեւորում. Նախնական ընթերցումներ, քննություն, վերապատրաստման ծրագրի ընթացքին մասնակցություն եւ ձեռքբերումներ:</p>	26		6
Հայերենի ուսուցման մանկավարժություն 2	<p>Սփիւռքի մէջ հայերենի ուսուցման նորարար մեթոտներ (Անգլերեն եւ Հայերեն)</p> <ul style="list-style-type: none"> Լեզուի ուսուցման մօտեցում` հիմնուած խնդիրի, պարտականութեան եւ նախագիծերու վրայ: Քննադատական մտածողութեան ուսուցում (Յակոբ Եագուպեան) <p>Դասախօս` Անքր ալ-Ութայէ, PhD ԻՆԱԼՔՕ, Դասախօս WGU (ԱՄՆ)</p> <p>Հիւր դասախօս: Յակոբ Եագուպեան (Հայկազեան Համալսարան, Պէրթ)</p> <p>Ընթացիկ արժեւորում. Նախնական ընթերցումներ, քննություն, վերապատրաստման ծրագրի ընթացքին մասնակցություն եւ ձեռքբերումներ:</p> <p>Անձնական աշխատանք. իւրաքանչիւր մասնակից պէտք է մշակէ երկու նախագիծ-դաս գործածելով վերամշակման ծրագրի ընթացքին ձեռք բերած գիտելիքները:</p>	26		6
Հայերենի ուսուցման մանկավարժություն: դիտարկում	<p>Ուղղորդուած դիտարկում ճամբարի ընթացքին (լեզուի պատանեկան ճամբար) (Հայերեն)</p> <p>Լեզուի իւրացման հարցերու տեսական դասընթացքները (9 ժ) հիմնուած են նախնական ընթերցումներու վրայ եւ նպատակ ունին դպրոցական եւ ճամբարի միջավայրերու պայմաններու համեմատությունը:</p> <p>Թեմաներ. Իւրացման ուղղորդուած եւ ազատ ռազմավարություններ, իւրացման հոգե- եւ ընկերա-լեզուաբանական գործոններ, ուսուցման մեթոտներ եւ մօտեցումներ, դասաւանդման եղանակներ. Բազմակի Ուշիմություն (Կարտոնըր)` տարբերակուած ուսուցում, դպրոցը որպէս լեզուի իւրացման ուղեցոյց եւ զարգացման աղբիւր, հայերենի դասաւանդումին նպաստող աղբիւրներ; Ինչպէ՞ս դասարանէն ներս օգտագործել արտադասարանային փաստեր:</p> <p>Ճամբարի միջավայրէն ներս լեզուի իւրացման իրավիճակներու խոհական դիտարկում: Դիտարկումը ուղղորդելու նպատակով խմբային աշխատանոցներ (15 ժ):</p> <p>Դասախօս` Անի Կարմիրեան, Կրկնակական Հիմնարկութեան Արեւմտահայերենի զարգացման ծրագիրներու գլխավոր պատասխանատու, Նիւ Ճըրզիի Հովնանեան վարժարանի նախկին տնօրէն:</p> <p>Ընթացիկ արժեւորում. Տեսական բաժին.- Նախնական ընթերցումներ եւ նիստերու ընթացքին գործօն մասնակցություն</p> <p>Գործնական աշխատանք.- Դիտարկում եւ համապատասխան թերթիկներու ամբողջացում: Նիստերու ընթացքին գործօն մասնակցություն:</p>	9	30	6

<p>Աշխատանոց: Գրականություն և գրաւոր</p>	<p>Աշխատանոց.- Ընթերցանություն և գրաւոր ստեղծագործություն (Անգլերէն)</p> <p>Տարրեր՝ առցանց աղբիւրներու օգտագործման մասին</p> <p>Դասախօս՝ Էյմի Հյուզ, Ուսուցիչ վերապատրաստող, ԱՄՆ (գրաւոր ստեղծագործություն, ծրագիրներու և ուսուցման գործընթացներու մշակում)</p> <p>Ընթացիկ արժեւորում .- վերապատրաստման ծրագրի ընթացքին մասնակցություն և ձեռքբերումներ:</p>	24		3
<p>Գործնական աշխատանք</p>	<p>Գործնական աշխատանք (ամառնային դասընթացքին յաջորդող ուսումնական տարեշրջանի ընթացքին)</p> <p>Ուսումնական նորարար մեթոտներու կիրարկում դասարանէն ներս՝ ըստ նախօրոք մշակուած և հաստատուած երկու նախագիծ-դաս ծրագիրներուն:</p> <p>Գործնական աշխատանքի նպատակակէտերը կ'ամրագրուին դասախօսին և մասնակցին միջեւ ամառնային դասընթացքի ընթացքին և այս մշակուած ծրագիրը պէտք է յանձնուի համապատասխան դասախօսին մինչև Սեպտեմբերի աւարտ:</p> <p>Ծրագիրը պէտք է իրագործուի Հոկտեմբերէն Ապրիլի միջեւ, անձնական առաջնորդի խորհրդատուութեամբ (ե-նամակներու փոխանակում և վիտէօ հանդիպումներ)</p> <p>Ընթացիկ արժեւորում .- Վիտէօ հանդիպումներ խորհրդատու դասախօսին հետ, գործնական աշխատանքի նիւթերու և տեսանիւթերու փոխանակում)</p> <p>Աւարտական արժեւորում: Հեռակայ հարցազրոյց կամ գրաւոր հաշուետուութիւն, որ թոյլ կու տայ ուսանողին անդրադառնալ վերամշակման ծրագրի շնորհած դասարանային գործունէութեան բարելաման և արգելքներու վերլուծութեան և համապատասխան լուծումներու մշակման:</p> <p>Քննիչ յանձնաժողով : Ա. ալ-Պաթայնէ, Ա. Տօնապետեան, Ա. Կարմիրեան, Յ. Եագուպեան</p>		50	9
<p>Օտար լեզու</p>	<p>Օտար լեզուի ուսուցում՝ Լեզուի իւրացման գործընթացին մասին մտասուելու առիթ ստեղծելու համար</p> <p>Արժեւորում .- ամենօրեայ խոհական նշումներու գրքոյկ (վերլուծելու համար օգտագործուած մեթոտները, դիտարկելու համար ընթացքը և լեզուի իւրացման անձնական փորձառութիւնը համեմատելու մասնակցին դասաւանդման մեթոտներուն հետ)</p>	18		2
	Ընդհանուր	103 ժ	80 ժ	32